Օրինակ նամակի 'ի պաշտօնի Ռոնկահատոյց:

ԳԼՈՒԽ ՀԶ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յաշխարհէն տայիքու և թուղթ փոխանորդութեան նոցայ քեզ, և 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ 'ի տանն հայոց, տուաք քեզ նամակ շնորհաց և պաշտօնի ռոճկահատուցման պետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Զաքարայ պարտիզաց փորու յիշխեսցես 'ի վերայ ամենայն զօրաց զինուորութեան ռոճկաց, և հատուցումն ռոճկաց ամենայն պաշտօնատարաց, ըստ իւրաքանչիւր հատուցումն լինիցի 'ի ականատեսութեան քոյ ամենայն ամսոյ, և 'ի վերայ թղթոյ ռոճկա ընկալութեան լինիցի ձեռնադրեալ 'ի քէն ապա հատուցումն ստանայցէ 'ի գանձարանէն, պատուիրեմք քեզ զի զգոյշ լինիցիս զի ռոճիկ հասարակ զինուորաց որ ելանէ 'ի տանէն հայոց, անթերի մտցէ 'ի ձեռն զինուորին մերոյ ըստ իւրաքանչ առաջի աւուրն ամսոյ եթէ առողջ և եթէ տկար անձանց, և զրամն հատուցանելոյ ռոճկի պիտոյ է յատկապէս ընտիր և յստակ լինիլ և ոչ հին և մի մաշեալ և զոչ ինչ պակասութեամբ, զի մի գուցէ զինուորն մեր կորուսանիցէ լոման մի պղնձոյ 'ի հասարակօրէն ռո-